235 թ. (Ջաֆար) Մուտավակկիլ յանձնեց իւր որդի Իբրահիմ Մուայիդ Բիլլահին[1] Ասորիք, Հայաստան եւ Ադրպատական, տալով նորան քարտուղար Մուհամեդ ի. Ալի Մա'րուֆին։ Միաժամանակ Մուտավակկիլ հրամայեց, որ Իբրահիմ քրիստոնեայ բնակիչներին օգնութեան կոչէ սուլթանին վերաբերեալ գործերում, իսկ եկեղեցիք աւերէ։

(237 թ.) Հայաստան ապստամբեցաւ. բազմաթիւ տեղացի իշխաններ եւ այլք խռովեցան եւ տիրեցին իրանց գաւառներին։ Մուտավակկիլ նշանակեց Աբու Սայիդ Մուհամեդ ի. Իւսուֆին կառավարիչ, որ գնաց իւր պաշտօնատեղը։ Նորա մահից յետոյ, որ առանց հիւանդութեան առաջացաւ, Մուտավակկիլ դրեց նորա որդի Իւսուֆին կառավարիչ։ Գալով Հայաստան նա թուղթ գրեց հայ իշխաններին, որոնցից ոմանք պատասխանեցին (նորան հնազանդելու) համաձայնութեամբ. Բագարատ[2] որդի Աշոտի գնաց նորա մօտ իրան ապահովութիւն ուրիշելու խնդրանքը, սակայն Իւսուֆ ուղարկեց նորան Մուտավակկիլի մօտ եւ... (պակասորդ)։ Իւսուֆի հետ ճակատեցաւ Յովհան որդի[3]... եւ սպանեց նորան։ Այն ժամանակ երկիրը ապստամբեցաւ։

---

1 Ըստ Տաբարիի՝ Աբու Աբդուլլահ Մուտազ Բիլլահին։

2 Արաբացի մատենագրերի մօտ հազուադիւտ է անունիս մաքուր հայերէն ձեւը, որ տալիս է այստեղ Եաքուբին։ Զարմանալի է, որ մեր պատմագիրը միւսների հետ համեմատ վերին աստիճանի հատուկատոր է նկարագրում խութեցոց ապստամբութիւնը եւ Ցփղիսի առումն։

3 Այսպէս կը կարդամ, համաձայն Թովմայ Արծրունու վկայութեան ان ՝ ոչ կէտադրած անունս („Էր ընդ գերեալսն ի լեռնէն խութայ Յովհան անուն„ էջ 188, հրատ. Ք. Պատկանեանի, Պետերբուրգ 1887)։ Եաքուբին յիշում է հերոսի նաեւ հայրանունը, որ սակայն աղաւաղման պատճառով դժարին է որոշել։